# ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ջրային օրենսդրությունը և դրա հետ կապված այլ օրենսդրություններ պետք է արտացոլեն ջրի գործառույթները որպես էկոհամակարգի պահպանման միջոցի: Ջրային էկոհամակարգում պայմանների պահպանումը և բարելավումը պետք է դրվի որպես այս օրենսդրության հիմնական պահանջներից մեկը: Այսպիսի օրենսդրությունը պետք է հստակ սահմանի պատասխանատվություն միջոցառումների իրականացման և մոնիթորինգի կողմից:

Ջրատնտեսական գործնեության ընդհանուր պլանները պետք է դիտարկվեն որպես կարևոր գործիք հիմնված ջրատնտեսական գործնեության էկոհամակարգային մոտեցման վրա: Առափնյա երկրները պետք է ներառեն էկոհամակարգային պատկերացումները ինչպես ջրատնտեսական գործնեության պլաններում, դրանց տրանսսահմանային ջրավազանների ջրահավաք ավազանների համապատասխան տարածքներում, այնպես էլ երկկողմանի և բազմակողմանի գործողությունների պլաններում, որոնք ընդգրկում են այդ ջրավազանների բոլոր ջրահավաք ավազանները: Պլանավորման նպատակների համար մեծ տարածություն զբաղեցնող գետի ավազանը կարող է դիտարկվել որպես էկոհամակարգերի միասնական համալիր, քանի որ ցանկացած պահի այն իրենից ներկայացնում է էկոհամակարգերի տեսակների ամբողջություն, հունից մինչև գետաբերան: Այսպիսով ջրահավաք ավազանը կարող է բաժանվել էկոհամակարգերի պլանավորման գոտիների, հիմնված ֆիզոլոգիական գծերի (ռելիեֆ) և ջրի հոսքը բնութագրող գծերի վրա (անկում, վտակների դասավորություն): Այսպիսի գոտիները կարող են ներառել օրինակ՝ հունը, միջին հոսանքը, ներքին հոսքը և դելտան: Էկոհամակարգային մոտեցումը պահանջում է պլանավորում, որը հիմնվում է ոչ թե քաղաքական կամ իրավաբանական սահմանների վրա, այլ էկոհամակարգերի գոտիների սահմանների վրա: Այն պահանջում է նաև առավել ակտիվ միջկառավարչական համագործակցություն բոլոր մակարդակներում, քանի որ ջրային էկոհամակարգերի մեծ մասը հատում են ազգային սահմանները: Պլանային գործնեությունը, որը հիմնված է ամբողջ ջրահավաք ավազանի, կամ նրա նշանակալի մասի վրա պետք է հնարավորություն ստեղծի ջրի օգտագործման տարբեր տեսակների և էկոհամակարգի մյուս ռեսուրսների հավասարապես օգտագործման համար: Այս պլաններում պետք է վերլուծված լինեն օգտագործման տարբեր ձևերի միջև կոնֆլիկտները և ալտերնատիվ որոշումների հնարավոր հետևանքները: Անհրաժեշտ է ընդլայնել կոնֆլիկտների վերլուծության մեթոդները, որը անց է կացվում ընդունող որոշումների հիմնավորման ժամանակ այն պատճառով, որ նշված մեթոդները ներառեն ջրային էկոհամակարգերի վրա ազդեցության տարբերակները: Այսպիսի մոտեցումը թույլ կտա ոչ միայն հաշվի առնել այլընտրանքային վերլուծության ժամանակ էկոհամակարգերի պահպանման ծախսերը, այլ նաև կատարելագործել

գնահատման մեթոդները: Անհրաժեշտ է տնտեսական և բյուջետային գործիքների օգնությամբ ներազդել էկոլոգիական ծախքերի ինտերնալիզացիայի վրա կապված ջրի օգտագործման հետ:

«Աղտոտողը վճարում է» սկզբունքների համաձայն այս գործիքները պետք է ավելի շատ ունենան խթանող դրդապատճառներ, որոնք խրախուսում են աղբյուրի և աղտոտման կանխումը:

Գործնական կիրառությունը, որը հիմնված է ներազդող գործնեության էկոլոգիական մոտեցման վրա, պահանջում է առավել խորը վերլուծություն և առավել հստակ կոորդինացում, որն իրականացվում է կարևորագույն հատվածներում՝ կախված ջրի հետ ջրահավաք ավազանի սահմաններում, ներառյալ՝ ջրամատակարարումը, աղտոտման դեմ պայքարը, էներգետիկան, տրանսպորտը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, ձկնորսությունը, անտառաբուծությունը, տուրիզմը և հանգիստը: Ընդարձակ փոխհամաձայնություն ձեռք բերելու համար կառավարչական կառույցները պետք է ներառեն մասնավոր կազմակերպություններ, հողօգտագործողներ, հասարակական շահը ներկայացնող խմբեր, ինչպես նախապատրաստական էտապում, այնպես էլ էկոհամակարգային մոտեցման վրա հիմնված պլանային գործունեության իրականացման էտապում, և նրանք պետք է խրախուսեն դիրեկտիվ օրգանների, արդյունաբերողների, ֆերմերների, պլանային օրգանների աշխատողների, ջրօգտագործողների և լայն հասարակության համատեղ գործողությունները:

Կառավարչական կազմակերպչական միջոցառումները կարող են լինել սկսած նոր օրգանների ստեղծմամբ մինչև գոյություն ունեցողների կատարելագործումը: Ամեն դեպքում էկոհամակարգային մոտեցման աջակցությունը և դրա իրականացումը տարբեր վարչական պայմաններում կարող է հեշտացվել, եթե այն ապահովի ինչ-որ կոորդինացնող օրգանով, որը պատասխանատվություն կկրի ջրահավաք ավազանի սահմաններում, մասնավորապես գործառույթների պլանների պատրաստման, ուսումնասիրությունների կոորդինացման և ուղղորդման, մոնիթորինգի իրականացման համար, բացի այդ, կատարված աշխատանքի համար ինֆորմացիայի տրամադրման և հասարակական ինֆորմացիայի համար: Տրանսսահմանային ջրավազանների դեպքում այս խնդիրը պետք է հանձնարարվի համատեղ օրգաններին՝ ստեղծված ափամերձ երկրների միջոցով:

Էկոհամակարգային մոտեցումը կարող է ակտիվացվել տարբեր ուղիներով՝ տեղական օրգանների կառավարման պատասխանատվության նշանակալի մասի պատվիրակմամբ, քանի որ դրանք սովորաբար ունենում են իրավունքներ կապված հողօգտագործման որոշումների ընդունման հետ: Հողօգտագործումը և ջրահավաք ավազանի սահմաններում գործնեությունը նշանակալի ազդեցություն են ունենում ջրային էկոհամակարգերի վրա:

Հողօգտագործման պլանների կոորդինացումը ջրային տնտեսության պլանավորման միջոցառումների հետ հանդիսանում է էկոհամակարգային մոտեցման ամրագրման կարևոր միջոցներից մեկը:

Քայլերի անհրաժեշտությունը

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրները շարունակում եմ կրել լուրջ էկոլոգիական հիմնախնդիրներ: Դրանց շարքում առաջնահերթ տեղ է գրավում մակերևութային ու ստորգետնյա ջրերի բացասական որակական հատկանիշները, պահպանման միջոցառումների բացակայությունը, վատ զարգացած մունիցիպալ ենթակառուցվածքը և ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը: Անհապաղ գործողությունները անհրաժեշտ են էկոլոգիապես կայուն տնտեսական զարգացման, մարդու առողջության վրա երկարաժամկետ բացասական
ազդեցությունների կանխման և, ընդհանրապես, ջրային էկոհամակարգերին հասցվող վնասի կանխման համար: Այժմ, կարճաժամկետ, ոչ կայուն տնտեսական զարգացման գերադասումը էկոլոգիական ջրային ռեսուրսների հիմնախնդիրների լուծման համար միջոցներ գտնելուն, կարող է ավելի թանկ արժենալ մի քանի տարի անց: Անցումային շրջանի ընթացքում ԿԱԵ և ԱՊՀ շատ երկրներում նկատվեց աղտոտվածության որոշակի նվազում: Նմանատիպ աղտոտվածության կրճատունը կարող է ժամանակավոր լինել, եթե տնտեսական աճը ուղեկցվի աղտոտվածության մասշտաբների նույնացման աճով: ԿԱԵ և ԱՊՀ-ի առավել զարգացած երկրներում տնտեսության կառուցվածքային վերափոխումը բերեց առավել մաքուր ու արդյունավետ արտադրության, իսկ շուկայական վերափոխումները, ինչպիսիք են սուբսիդիաների կրճատումը ու գների վերահսկումը, կոշտ բյուջետային սահմանափակումների սահմանումը, առևտրի մասնավորեցումը ու լիբերալիզացիան, բերեց ջրային ռեսուրսների համակարգում նշանակալի արդյունքի: Սակայն տարածաշրջանում ու արևմտյան երկրներում աղտոտվածության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միայն տնտեսկան վերափոխումները և դրանց իրականացումը բավարար չեն ջրային ռեսուրսների պրոբլեմների լուծման համար: ԿԱԵ և ԱՊՀ երկրներում նաև անհրաժեշտ է առավել արդյունավետ բնապահպանական քաղաքականության հետևողական ներդրում, ջրային ռեսուրսների օգտագործման փորձի բարելավման հետ մեկտեղ: Անցումային շրջանի առավել զարգացած երկրներում որոշ ուշադրություն է դարձվում քաղաքական նախաձեռնություններին, որոնք միաժամանակ լուծում են ջրօգտագործման հիմնախնդիրները ու կայուն տնտեսական զարգացում ապահովող երկարաժամկետ ազդակներ են ստեղծում: ԿԱԵ երկրներում նմանատիպ գործողությունների խթան հանդիսացավ Եվրոմիության մուտքը: Եվրոմիություն մտնելու բնապահպանական պահանջների կատարման ծախսերը գնահատված են մի քանի տասնյակ մլրդ. եվրո միայն ջրի պահպանման համար: Այս թիվը թույլ է տալիս պատկերացում կազմել տարածաշրջանում առկա էկոլոգիական պրոբլեմների մասին: Անհրաժեշտ բնապահպանական ներդրումներն այդ երկրներում կազմում են տարեկան ՀՆԱ-ի 2-4%-ը առկա տաս տարիների համար: ԱՊՀ երկրներում նմանատիպ դրդապատճառը բացակայում է,
բայց ջրային ռեսուրսների ոլորտում կատարված ներդրումների պահանջը կարող է ավելի մեծ լինել, քանզի այս երկրներում էկոլոգիական առաջընթացը անցումային շրջանի առաջին տարիներին

առավել դանդաղ է եղել քան ԿԱԵ-ում: Արևմտյան բնապահպանական քաղաքականությունը բավական արդյունավետ լուծել է ջրային ռեսուրսների հիմնախնդիրը, որոնք այժմ հանդիսանում են էկոլոգիական գերակայության ԿԱԵ և ԱՊՀ երկրների համար:

Ներդրումների առավել բարձր մակարդակը, ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը, ներդնումը, ինչպես նաև արդյունաբերական և ջերմային պրոցեսների արդյունավետության բարձրացումը ներդրում ունեցան ջրային ռեսուրսների աղտոտվածության ինտենսիվության նվազման մեջ մի շարք արևմտյան երկրներում: Սակայն, վարչահրամայական գործիքները բնապահպանական քաղաքականության, որոնք ավանդաբար օգտագործվում էին արևմուտքում, խոչընդոտում էին ջրօգտագործման միջոցառումների իրականացմանը և ավելացնում էին դրանց իրականացման ծախսերը: Գնալով ընթացիկ բնապահպանական քաղաքականությունը ավելի շատ է փորձում օգտագործել շուկայական ուժերը, ինտերնալիզացնել աղտոտման և բնական ռեսուրսների օգտագործման սոցիալական ծախքերը, անցնել գնագոյացման, որը հաշվի կառնի մունիցիպալ ծառայությունների հատկացման բոլոր ծախսերը, ինչպիսիք են ջրամատակարարումը և ջրահեռացումը, ինչպես նաև փնտրել տնտեսական ավելի ճկուն գործիքներ, որոնք թույլ են տալիս միաժամանակ պահպանել տնտեսական զարգացումը: Բնօգտագործման տնտեսական մեխանիզմներն ապացուցել են այդ երկրներում իրենց առավելությունը այս նպատակներին հասնելու համար:

Ընդհանուր ենթադրություն որ կարելի է կատարել աշխատանքային փորձի հիման վրա, կայանում է նրանում, որ տնտեսական ու էկոլոգիական ցուցանիշները փոխադարձ կախված են (այլ ոչ թե փոխբացառող), շրջակա միջավայրը հանդիսանում է մի շարք տնտեսական գործընթացների կարևոր տարր, իսկ տնտեսական լուծումները կարևոր ազդեցություն են ունենում ջրային միջավայրի վիճակի վրա: